



ՀԱՅԲԱՆՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԱՐԺԱՐԱՐԱՐՆԵՐԻ

ԶՈՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ԹԻԻ 138

14 ՄԱՐՏ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԻ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Մարտ	15	†	Կիր. զձ.	Դ. Քառասնորդաց պահոց: Տնեսին:
	16		Բշ. զկ.	ԻԲ. or աղցից:
	17		Գշ. դձ.	ԻԳ. or »
	18		Դշ. դկ.	ԻԴ. or »
	19		Եշ. աձ.	ԻԵ. or » (Ս. Յովսէփ Ասուածահայր)
	20		Ուր. ալ.	ԻԶ. or »
	21		Շք. ղձ.	ԻԷ. or Մեծ-Պահոց: Եւ Սրբոց քառասուն մանկանցն Սեբասիոյ:

Աթոռանիս Ս. Ասուածածին Եկեղեցւոյս մէջ առաջիկայ Մեծ Պահոց Կիրակի օրերուն քարոզները քուրճերէն լեզուով պիտի տրուին նոյն Եկեղեցւոյ Մեծաւոր Դեր. Ասուրեան վարդապետի կողմանէ, հետեւեալ ճիւղերուն վրայ.

Ա. Կիրակի. Պէտք է որ զսնուի Եկեղեցւոյ մէջ ուսուցանող իշխանութիւն մը:

Բ. Կիրակի. Պէտք է հաւասար Եկեղեցւոյ խօսքին:

Գ. Կիրակի. Պէտք է գործնականապէս հաւասար Եկեղեցւոյ խօսքին:

Դ. Կիրակի. Պէտք է հնազանդիլ Եկեղեցւոյ:

Ե. Կիրակի. Պէտք է սիրել Եկեղեցին:

Ծանօթ.— Կիրակի օրերը ժամը 4ին երեկոյեան ժամերգութիւն պիտի կատարուի եւ սնմիջապէս յետոյ Քարոզ պիտի տրուի:

* * * Նոյն Եկեղեցւոյ մէջ Մարտ 23-28 հոգեւոր կրթութիւն տեղի պիտի ունենայ:

Այս կրթութեան միջոցին ամէն երեկոյ ժամը 5ին Վարդարան պիտի զուրցուի, յետոյ քուրճերէն լեզուով պիտի քարոզէ Դեր. Կղեմէս Վ. Ասուրեան, եւ ապա Ամենասուրբ Հաղորդութեամբ օրհնութիւն պիտի տրուի:



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Զորրոդ սարի ① 14 Մարտ 1914 ① Թիւ 138

«Սրբազան Քաճաճայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
բունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի օէլ Վալի, աւ Ամեն. Տ. Պօլսո Պետրոս Ժ.Ի. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիո
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու անամարաւ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՆՈՂԿԱՆԻ ՀՐԾՍՏՈՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Այս օրերս Հայ Կաթողիկէից ոմանց
լաշխուած է ձրիապէս գրքոյկ մը, որոյ ախտ-
դոսն է «Պապ եւ Աւետարան: Ասեմաբանու-
թիւն Սօնար. Շորոգմայերի Վասիկանեան
ժողովին մէջ»:

Հազիւ մէկ երկու նախադասութիւն կը
սկսիք ընթերցող, և ահա կը նշմարէք իս-
կոյն որ հոս՝ ինչպէս ուրիշ շատ տեղեր՝ ա-
մենէն նուիրական բառերը գործածուած են
ամենէն պիղծ ու հոգեւորական արարքներ սքո-
ղելու նպատակաւ: Սոյն փոքրիկ գրքոյկն ա-
ռաջին բառէն մինչեւ վերջինը ճշմարիտ գլուխ
գործոց մըն է սգիտութեան և իմաստասկու-
թեան, ստույգիւն և անամօթութեան:

Ամէն ուսեալ անձ ո'ր կրօնքի որ վերա-
բերի, գիտէ թէ Պապերն ազնիւ, պարկեշտ,
մաքուր ու խղճամիտ անձինք եղած են,
որոնցմէ շատեր իսկ քրիստոնէութեան հա-
մար արիւն թափելով և կամ զիւցազնական
առաքելութեանց գործադրութեամբ փայլե-
լով՝ արժանացած են սրբազան խորաններու
վրայէ ընդունելու մեր մեծարանքն ինկոյ ու
աղօթից:

Ամէն ուսեալ անձ գիտէ թէ Պապութիւնն
աշխարհի ամենէն բարերար, յառաջդիմասէր
ու քաղաքակրթիչ իշխանութիւնն է եղած,
թէ նա հին ու նոր բարբարոսութեանց առ-
ջեւ թուժք կանգնած, և մարդկային ազդի
ժամանակաւոր ու յաւիտեանական երջանկու-
թեան համար խօսած ու գործած է անգուլ՝
մօր մը անզուգական գորովով:

Ամէն քրիստոնեայ գիտէ թէ Աւետարանն
Աստուծոյ խօսքն է որուն պէտք է մերձեց

նալ խորին խոնարհութեամբ, պատկառանք
և երկիւղածութեամբ, որուն մէջ մի բառն
արժանի է ամենէն լուրջ մտածութեան և
ուսումնասիրութեան, և որմէ աններելի ոճիւր
է հանել եզրակացութիւններ անիշխանական,
անհեղեղ, հակընկերային, անպատշաճ ու
հակասական: Ամէն ճշմարիտ կաթողիկէ գի-
տէ թէ Ս. Հարք և Վարդապետք եկեղեցւոյ
Աւետարանի մէջ տեսած են Ս. Պետրոսի
գլխաւորութիւնը և իւր յաջորդներուն գե-
րիշխանութիւնը ըովանդակ քրիստոնէութեան
մէջ՝ առանց երկրի ու ցեղի խտրութեան:

Յայտնի է ամէնուն թէ եկեղեցական ժո-
ղովի մը մէջ — ինչպէս ամէն լուրջ ու բա-
րեկրթ ժողովոյ — անգամք իրաւունք ու-
նին խօսելու, կարծիք յայտնելու, իրենց օ-
րինաւոր համոզումները պաշտպանելու. բայց
չունին իրաւունք ստելու, նենգելու, գի-
րար նախատելու, դժգոհելու իրենց երգմանց,
չարաչար գործածելու իրենց ցոյց տրուած
վստահութիւնը, և վերջապէս՝ արհամարհե-
լու այն հիմնական սկզբունքները, որոնց
չնորհիւ կրցան անդամակցիլ այդ ժողովոյ:

Ո՛վ չճանչնար ՎՄժն. Սգրոսմայէր, Տիա-
գովարի այս նշանաւոր Եպիսկոպոսը, վար-
դապետ ի փիլիսոփայութեան և յաստատաճա-
բանութեան: Երբ 55 ամեայ առոյգ հասակի
մէջ, 1870ին կը մտնէր ի Վատիկանեան ժո-
ղով, 12 տարի ծառայած էր Բրիտտոսի եկե-
ղեցւոյ իբրեւ քահանայ և 20 տարի իբրեւ
Եպիսկոպոս: Երբ դեռ քահանայապետական ան-
սխալութիւնը չէր վճռուած, երբ դեռ ամէն
ոք թեր ու դժմ կարծիք յայտնելու ազա-
տութիւն ունէր, Մժն. Սգրոսմայէր ուրիշ
համբաւաւոր Եպիսկոպոսներու հետ ոչ-հա-
թողիկէներու դարձին նոր պժուարութիւն
մը չյարուցանելու բաղձանօք՝ ժողովոյ մե-
ծամասնութեան հակառակ կարծիքը պաշտ-
պանեց ոչաւ ցեղին յատուկ արիութեամբ և
պերճախօսութեամբ: Բայց ինչպէ՞ս առաջին
եղած էր ազատօրէն խօսելու, նոյնպէս ա-
ռաջին եղաւ վեհանճնարար հնազանդելու,
և սքանչելի օրինակ մը առաւ աշխարհի թէ
ինչպէս կաթողիկէութեան մէջ ազատութիւն
և հնազանդութիւն — հեռի զիրար ջնջելէ

և իրարու թշնամի լինելէ — զիրար կը կա-
տարելագործեն և ստէպ միմեանց հրապոյր և
չնորհք կը յաւելուն:

Արդ եթէ այդ գրքոյկն հրատարակուէր
անուս Հոգէնդոտներու եւ անգրագէտ Զու-
լուներու համար, չպիտի կրնար անշուշտ
իւր արհամարհանքն աւելի ստատկացնել. ո՛չ
մի ամօթղածութիւն պահելով՝ բացէ ի բաց
ոտնակոխ կ'ընէ ամէն օրէնք, ամէն պատ-
շաճութիւն ու ամենէն տարրական գիտե-
լիքներ, եւ ուրիշ բան չի պարունակիր եթէ
ո՛չ երկար շարք մը՝ ա. Պատմական ծիծաղե-
լի սխալներու, նախատանայ և զրպարտու-
թեան՝ Պապերու գէմ, անմիտ ուրացութեանց
ո՛չ Պապութեան քաղաքակրթիչ գերին միայն,
այլ նոյն իսկ իւր օրինաւոր գոյութեան. բ.
Սեղաթիւրմանց, թշնամանայ, անհեղեղ ու
սրբապիղծ մեկնութեանց Աւետարանի, ի
վաղուց դատապարտեալ հերետիկոսութեանց
և լրբենի հայհոյութեանց. գ. Ո՛ր և է լուրջ
ժողովոյ մէջ յայտնուելու անարժան կարծեաց,
ստայօղ պատմութեանց, յանդուգն իմաստա-
կութեանց, բիրտ ու ամբարիշտ ակնարկու-
թեանց, ու այս ամէնը դրուած աշխարհա-
ծանօթ ու պատկառելի, ներհուն եւ սրբա-
կրօն Եպիսկոպոսի մը բերանը... Եպիսկոպոս
ի տես այս պիղծ էջերուն կը ստիպուինք գոչել.
«Չկայ ստուգիւ մարդէն աւելի նենգաւոր
հրէ՛ջ մը աշխարհի մէջ»: Սոյն տողերս չա-
փազանց խիստ չպիտի դանէք, երբ ըսեմ ձեզ
թէ անուն մը կայ մարդկութեան մէջ որ յետ
Աստուծոյ անուան՝ ամենէն աւելի արժանի
է մեծարանաց ու զովեստից, խնկոյց ու օրհ-
նութեանց, — Անարատ ու հրաշագեղ Կու-
սին անունն է այն, որ նմանապէս անգթո-
րէն նախատուած է այդ հրէշային պարսա-
ւազրոյն մէջ: Եւ ստախօս բերաններ կը
ժտին տակաւին Հայաստանեայց եկեղեցւոյ՝
Սուրբ Հայրերով պարծենալ. ինչպիսի՞ յան-
դիմանութիւն պիտի լսէին՝ երբ յառնէին ի-
րենց գերեզմաններէն անոնք որ երգեցին հո-
գեհաւազ ու երկնաշունչ՝ «Անթառամ ծաղիկ,
անդատապարտ շառաւիղ, վերաբուսեալ յար-
մատոյն Յոսեփ, զքեզ Եսայիսու կանխաւ
վերագոյհաց եօթնարբին չնորհաց Հոգւոյն

ընդունարան գոլ, Աստուածածին և կոյս զքեզ մեծացուցանեմք: Մաքուր աղաւնի եւ հարսն երկնից Մարիամ, տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին, քեզ երանեն ամենայն ազինք⁽¹⁾»:

Արդարեւ կրկին ցաւ մեզ համար տեսնել թէ այսպիսի երկ մը կը թարգմանուի Հայերէնի, եւ չհաւատայի՜ յանգգնութիւն՝ անպատկառ հրատարակիչք կը փութան բաշխել զայն ձրիարար Կաթողիկէ Հայերու, որոնք կը փափագին վերջ մը տալ ազգային կործանարար վէճերու, եւ որոնք կը պնդեն անպակ թէ ուղղափառ են անկեղծօրէն, կ'աւան համոզմամբ ու սրտիւ ամէն հերետիկոսութիւն, եւ կ'ուզեն ապրիլ ու մահիլ ի ծոյ Հոռոմեական Ս. Եկեղեցւոյ:

Երբ առաջին անգամ 1871ին հրատարակուեցաւ այդ ատենաբանութիւնը որ չէ արտատանուած երբեք ո՛չ ի Հռոմ եւ ո՛չ այլուր, եւ որոյ միակ յերիւրող հեղինակն է անխիղճ զրպարտիչ մը, Մօնս. Սգրոսմայէր եւ ուրիշ անդամք Տիեզերական Ս. Ժողովոյ՝ բողոքեցին արգար զայրոյթիւ, ու հոչակեցին պաշտօնապէս թէ Տիագօսարի Եպիսկոպոսի համար զանազան խնդիրներ (taussaire) մը գործն էր եւեթ, արժանի ամէն պարկեշտ հոգիներու պօգանքին:

Մենք որ կարգացինք Մօնս. Սգրոսմայէրի Վատիկանական Ժողովի մէջ արտասանած ճառերը, պարտ կը համարինք յայտարարել Ս. Ժողովոյն բոլոր պատմագիրներուն հետ թէ մեծանուն ատենախօսին բերնէն կամ գրչէն այգպիսի ծաղրելի անհեղեղութիւն մը չէ ելած երբեք ո՛չ 1870 Յունիս 2ին եւ ո՛չ ալ ուրիշ օր մը: Գալով վատ կեղծարարին, որ ծածկած էր միշտ իւր անունը, Մօնս. Սգրոսմայէր ճանչցաւ զայն 1876ին հետեւեալ նամակով, որ հրատարակուած է Ս. Ժողովին պատմութեան մէջ (Acta Conc. Vatic. IV, B. 649 sq.): Լազարիս քահանայ մըն է որ կը գրէ առ գերահռչակ Զրպարտեալն. «Պուէնոս-Այրէս, 18 օգոստ. 1876.

(1) Շարական Հայաստանից Ս. Եկեղեցւոյ:

«Դերապայծառ Տէր իմ,

«Թոյլ տուք ինձ յղել Ձեր Արհի. Տէրութեան առանձին ծրարով հոս հրատարակեալ Ամերիգա սէլ Սուսի մի թիւն, որ կը պարունակէ ձեմարսութիւն Վատիկանի մէջ տիրող սոստով խոստովանութիւնն՝ մարդու մը, որ Ձեզ դէմ մեծապէս անիրաւեցաւ հրատարակելով Վատիկանեան Ժողովոյ առթիւ եւ Ձեր անուան ներքեւ՝ ատենաբանութիւն մը զոր ասկէ քիչ առաջ տարածեցին հոս Բողոքականք: Այս մարդն յայտարարեց այն ատեն թէ ինքն է հեղինակն այդ ատենաբանութեան, եւ այսպէս դարմանեց պայթակղութիւնը գէթ չափով մը: Թէպէտ եւ ո՛չ մի յարաբերութիւն ունիմ հեղինակին հետ, զի տեմ սակայն թէ նա կը բաղձայ որ իւր յետս կոչումն ամենուրեք ճանչցուի յեւրոպա: Տ. Եղեղ Օկիւսդէն տէ Էոգատէրօ Մեքսիկացի Օգոստինեան կրօնաւոր մըն էր. ինքնին թողուց իւր Միաբանութիւնը, անցաւ ի Սպանիա, ի Ֆրանսա, եւ Տիեզերական Ժողովոյ ատեն՝ յիտալիա, եղաւ բողոքակոտն, ազատորմադիր, Գարպօնարեան, նորադանդ քաբողիչ, նոյն իսկ եպիսկոպոս բողոքական եւ այս վերջին հանգամանքով՝ պայթակղութիւն տուաւ կրկին ի Պրազիլիա եւ ի Մոնտեվիտէօ: Հոս ի Պուէնոս-Այրէս հաշտուեցաւ Եկեղեցւոյ հետ եւ ամուսնացաւ՝ իւր քահանայական ձեռնադրութիւնն ի Հռոմ անվաւեր ճանչցուելէ վերջ(?): Վերոյիշեալ յետս կոչումը ժամանակ Ամերիգա սէլ Սուսի աշխատակից էր, ուր այսօր կը գտնուի իրիւր խմբագիր: Իւր դարձն անկեղծ է: Աստուած գիտէ միայն, եւն:

«ԲԷՏԲՕ ՍԴՈՒԼԷՆՎԷՐԻ

«Լազարիս Առաքեալ, Եւն:

Վասն հարազատ օրինակին, Ճագովօ, 30 Դեկտեմբեր 1876, Ե. Վալինկէր, Եպիսկոպոսական քարտուղար⁽¹⁾:

Ու ի՞նչ մտածել այժմ անոնց նկատմամբ

(1) Hist. du Conc. du Vatican, d'après les documents authentiques, ouvrage du P. Théodore Grauderau, t. III. pp. 189-190.

որք չեն զգուիր այսպիսի չնական սուտերու թարգման ու հրատարակիչ, պաշտպան ու ջատագով կանգնիլ առ մեզ, ինչ խորհիլ Յովսէփ Նիշմանեաններու եւ Ջենոբ Մըսրրեաններու մասին, որոնք կուրորէն գործիք կը լինին երգմնազանց, վատչուէր, անխիղճ եւ ուխտադրուծ վանականի մը նենգութեան եւ կեղծարարութեան. որովհետեւ չուզեցին հաւատալ Աստուծոյ Եկեղեցւոյն, թոյլ տուաւ երկինք որ հաւատան ուրացողի մը խաբէութեան եւ աճապարութեան: Ազնուափայլն Տիկին Սվէչին ըսած էր արդէն. «Où la foi manque, la crédulité abonde»: Աւասիկ պատիժն անոնց որք ինքզինքնին հասարակ մահկանացուներէ վեր կը կարծեն եւ չեն ուզեր խոնարհիլ ճշմարտութեան քարոզիչներուն առջեւ. «Ջանձինս առ ի մաստունս ունէին՝ յիմարեցան»: Ինչ խորհիլ անոնց նկատմամբ որոնք դարէ մը ի վեր լոյս, լոյս կը գոչեն, եւ շարունակ խաւար կը պիտեն հայ մտաւորականութեան հորիզոնին վրայ. ինչ ըսել անոնց նկատմամբ որոնք պիտութիւն, ազատութիւն, պատիւ, արդարութիւն եւ բարոյական բառերն բերնէ չեն թողուր երբեք, եւ գիշեր ու ցերեկ ուրիշ բան չեն ընել եթէ ո՛չ թունաւորիչ հայութեան սիրտն ու հոգին՝ տպիտութեան, գերութեան, անպատուութեան, անիրաւութեան եւ անբարոյականութեան գործերն իբրեւ կապիկ օրինակելով, տարածելով, խնկարկելով ու թագմապատկելով: Աճթ ու նախատինք իրենց անուան, իրենց անձին, ամօթ իրենց չարաչուք յիշատակին...:

Աստուած իմ, ներելի՛ էր ստել այսպէս Բրիտանոնէութեան արեւուն տակ, միթէ, Ս. Գրոց մէջ այնչափ անգամ Սախսոսն ու Մարդասպան հաւասարօքէն չե՞ն նզովուած. «Չայր արիւնահեղ եւ զնեմզաւոր պիղծ առնես դու, Տէ՛ր»:

Ամէն Հայ որոյ սրտին մէջ դեռ չէ մարած ազգային արժանապատուութեան յետին մի կայծն, թող յոտն կանգնի, թող բողբոջ մեզ հետ, եւ թող նետէ հին ու նոր ստախոսներու ճակտին իւր զայրոյթն ու պոգանք:

Իսկ մենք, խոնարհ որդիք Ս. Եկեղեցւոյ, իբրեւ մարդ եւ իբրեւ Հայ բողոքեցիչ, հրապարակաւ հատուցում պահանջելէ վերջ, իբրեւ քրիստոնեայ կը վերցնենք մեր աչքերը դէպ ի երկինք, եւ մեր երկրպագելի Մօր Անարատ Կուսին վիշտերն ու արտասուք, եւ Աստուածային Փրկչին անգին Արիւնն, Հինգ Վէրքերը, պաշտելի Երեսն ու բոցավառ Սիրտը մատուցանելով Հօր Աստուծոյ՝ կ'ազնւենք ու կը խնդրենք սրտային. «Հայր, քո՛ղ դոցա, զի ո՛չ զիսեմ զի՛նչ գործեմ»:

Ծ. Կ. Ա.

27 Փետ. 1914

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ (*)

(Տեկամի)

Հաճար իւտ տիւհնտէն իթիպարէն պիր գաչ ատրմ եիւրիւնիւնճէ, օրատա ալթմըլ պէշ գատէմ գութըրնտա պիր գուպպէնին ալթըրնտա պիր պինա կէօրիւլիւր քի Ս. Գերեզման օրատա պուլընուր: Պու պինանըն ասլը բէք գատիմ տիր. ինչաաթը ախիւրէսի 1810տա իքմալ օլընմըլ տըր: Պու ինչաաթ, իւսթ թարաֆընտան զայէթ մուսթազամ օն սէքիլ ամուտ իւզէրինէ իճրա իտիւմիշ տիր, գարուը չարպ թարաֆընտա վէ «Տիւնեանըն օրաալ» թապիր օլընան յոււ օրթօտօքս քիլիսասընըն գարչընտա տըր:

Պու գարուըն պուլընտըլը ճիհէթէ նազարը թէտգըլ վէ թէէմիւլ իլէ պագան պիր ինանըն կէօրէճէյի ալթուըն գանտիլլէր իլէ, շամտանլար վէ իրի իրի մուլար իլէ մուգատտէս լէվալար վէ ալթուըն եալտըլըր բէսմէր վէ սայիր թագիմ ու թէքրիմ իչուըն թալիկ իտիւմիշ օլան էշեա վէ էտէվաթը կէօրիւպ տէ տէհէթ ու հայրէթլէր իչինտէ գալմամաը միւմքին տէյիլ տիր: Տիվանըն ալթընտա Ս. Գերեզմանըն իչինէ կէօթիւրէն պիրտէ մութանթան մէտիւլ վար տըր քի, էթրաֆը այնի թէզեինաթ իլէ միւզէյեէն տիր: Ս. Գերեզմանըն պուլընտըլը պինանըն թուը 26 վէ արըլ 17 գատէմ օլուպ, տիվարլարը մէրմէրտէն մամուլ տըր: Նիհա-

(*) Տես թիւ 136, ԿԸ 131

յէթինտէ 11 գտտէմ թուլ վէ 10 գատէմ արզընտա պուլընան պիր մատուռ տահա վար քի, թավանընտա պէշի Բոււլարըն, պէշի Լաթինլէրին, տէօրտիւ էրմէնիլէրին վէ պիրի Ղըպթիլէրին օլմապ իւզրէ օն պէշ ալ-թուլն գանտիլ ապըլը տըր: Պու մատուռըն օրթաւընտա պիր թաշ վար քի պու թաշ մէ-լէք թարաֆընտան Ս. Գերեզմանըն իւզէ-րինտէն եոււարլանան թաշ տըր տէյէ իթի-գատ օլընըր: Ս. Գերեզմանա պու մատուռ-տան կիրիլիր վէ օրանըն թուլը ալթը պու-չուզ վէ արզը տէօրթ գատէմ տիր: Ս. Գե-րեզմանըն պուլընտըլը պու եէրին սաթհը ֆէֆգ էլ ատէ կիւզէլ մէրմէրտէն մամուլ տըր թավանը իսէ պիր թազըմ մուտար իւզէ-րինէ գայիմ օլուպ իւզէրինէ ալթուլտան մամուլ 42 գանտիլ ապըլը տըր: Պու գան-տիլլէրին տէօրտիւ զըպթիլէրին օլուպ, միւ-թէպապիսի միւթէսալիլէն տիկէր թայիֆէ-լէր արաւընտա թագսիմ օլընմը տըր: Մա-տուռըն տիւարլարընտա, Յիսուս էֆէնտի-միզլին հարաքեաթընտան պազըսընը թէմիլ իտէն նապչլար վար տըր քի պուլարտան հէր պիրի, պու մահալլի թազիմտէ միւշթէ-րէք օլան միլլէթլէրին պիրինէ այիտ տիր:

Ղուկաս Աւետարանիչին զիքը իթտիլինէ կէօրէ, Յիսուսըն թէնի թաշտան մամուլ պիր Կերեզման իչինէ տէֆն օլունմուշ տըր, հաթթա Հեզլինէ Սուլթան տախի Ս. իսաչը ա-րատըլը վազըթ պիր մաղարա պուլտը վէ իւզէրինէ պիր խորան պինա իթտիրտի: իս-չակիրլէր Երուսաղէմը զապթ իթտիլէրի վազըթ, խորանըն ալթընտա իքի օտաճըպ պուլտուլար, պիրիսի խարիճի տիր վէ հրիշ-տակապ խորան թապիր օլունըր, իքինճիսի տախիլի տիր վէ Ս. Գերեզման օրատա պու-լընըր: Ասարը միւթէվարիտէտէն իսթիտլալ օլընտըլընա կէօրէ, պու եէր 1555 սէնէսին-տէ հէտմ օլունտը իսէտէ, Ս. Գերեզման թէքրար պինա իտիլտի: 1808 սէնէսինտէ եանտը ֆագաթ 1810 սէնէսինտէ եինէ հա-բըլտը:

Հէր սէնէ Բասգալիտա Աւագ Շարաթ կիւնիւ Ս. Գերեզմանըն էթրաֆընտա տուր-մագ իւզրէ հէր թայիֆէ պիր եէր ալըր վէ

էօլլէնտէն սօնրա Գերեզմանըն պիր բէնճիրէ-սինտէն նուր չըգար քի: ուխտաւորլար էլ-լէրինտէ հազըրլատըզլարը մուլարը պուլ-տան հազարլար վէ մուլարըն եանտըլը վա-զըթ ուխտաւորլար անտէն թէպէրրիւք ի-տէրլէր, եիւզլլէրինէ վէ էլպիսէլլէրինէ սիւ-րէրլէր: Բուսլար եագտըզլարը մուլարը եիւզլլէրինէն էթրաֆընտա տօլաշտըրըլար, էսվապլարընըն իչինէ սօգարլար վէ եան-մագտան հիչ չէքինմէզլէր:

• •

Ս. Գերեզմանըն էթրաֆընտաքի հալ-լուլը քրիսթիան միլլէթլէր քէնտի արաւա-ընտա թագսիմ իթմիլլէր տիր: Գերեզմանըն զարպ թարաֆընտա բարմագլըզլա մուհաթ օլան խորան օն ալթընճը ասրտան պէրի Ղպթիլէրէ այիտ տիր վէ լոյս չըգտըլը կիւն տէ օրատա տուրուրլար: Բէզալիք, Բոււմ, Օրթոտոքս, Լաթին, էրմէնի վէ Սիւրիանի թայիֆէլլէրինէն քինտիլէրէ մախուս եէրլէրի վար տըր վէ հիչ պիր թայիֆէ տիկէր թա-յիֆէնին եէրինէ թէճավուզ իտէմէզ: Բիւմ թէճավուզ իտէրտէ, տէրհալ միւթէճավուզը ալէյի թարաֆընտան մէնն օլընըր: Հիչ պիր թայիֆէ քէնտինէ մախուս օլան եէրտէն պաչգա գաթիէն պիր եէր սիւրիւրէմէզ: Սիւ-րիւրիւրէն, սիւրիւրիկէ՝ գօմչու թայիֆէլլէ-րինտէն պիրինէ այիտ պիր եէրէ իլիշտիմի, պու եէրին սահիպի օլան թայիֆէնին միւ-թէմէրի պիր քէրրէ իլթար էտէր, տինլէ-մէտիմի գուվլէթլէ մէնն իտէր: չիւնքի, պիր թայիֆէ պիր եէրի սիւրիւրմէքլէ, օրա-յա վազը եէտ գապիլինտէն թէմէլլիւք իչին հազգ թէմէն էթմէսինտէն գօրգուլըր:

Գապիլի թագսիմ օլմայան պիր թավան-տան եա պիր տիւարտան, մէսէլա պիր չիվի տիւշէրտէ, օ չիվիլի եէրինէ գօմագ, երզը-լան պիր եէրի թէրմիմ իթմէք չօգ տէֆա խալլի միւշքիլաթա մարուզ գալըր: Նիհա-յէթ եա միւշթէրէք մէճիլալէր ագտ իտիլէ-րէք վէ եախօտ հիւքիւմէթլէր թարաֆըն-տան միւտախէլէ վուգուլիլէ սուրէթի թէր-միմ հապընտա պիր գարար վէրիլէպիլիր:

• •

Ս. Յարութիւն քիլիսասընտա միւթէատ-
տիտ քիլիսալար, մատուռլար վէ հատիկեար-
լար վար տըր քի. պունլարըն էն մուհիմի,
գարուսը Ս. Գերեզմանըն գարչըսընտա օլան
Բում Օրթոտոքս քիլիսասը տըր, իչինտէ պիր
չօգ զըյմէթտար ասարը աթիգա մէվճուտ
տըր. օրթասընտա տա «Տիւնեանըն մէրքէզի»
թապիր օլունան պիր եէր վար տըր. Բիլի-
սանըն իչինտէ իքի պէօյիւք քիւրսի վար
տըր քի պունլարտան պիրինէ Անթաքիա,
տիկէրինէ տէ Նրուսաղէմ րում օրթոտոքս
բաթրիպլէրի օթուրուր:

Հէլէ Լաթինլէրէ այիտ օլան եէրլէր դա-
յէթ շաշատար տըր, պիր չօգ գէյմէթտար
էչեա վէ ասարտան մատա, քիլիսայա միւ-
թէալլիգ ասարը գատիմէ տէ բէք չօգ տըր:
Խաչակիրլէր գէմանընտա Նրուսաղէմ հիւքմ-
տարը օլմուշ օլան Կօտըֆրուանըն խաչը,
գըրճը վէ մէհմուզը տա օրատա մահֆուզ
տըր. Դըլճըն թուր իքի գատէմ վէ սէքիզ
գըրաթ տըր:

Պունա միւմասիլ տիկէր թայիֆէլէրին տէ
էհէմմիյէթլէրինէ միւթէնասըպ պիրէր եէրի,
քիլիսասը վէ մատուռը վար տըր քի օրատա
իճրաի ային իտէր վէ օրանըն հագգ թէմէլ-
լիւքիւնիւ իտամէյէ դայրէթ իտէրլէր

ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍՅՑ ՔԱՀԱՆԱՅԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՆ ՕՍՄԱՆՅԻՈՑ

ՈՐՔ ՅԱՐԵԱՆ Ի ՎԵՐԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԻԻՐԵԱՆՑ
ԵՒ ՀԱՆԻՆ ԶՆԱ Ի ՊԱՀԵՆ ՎԱՍՆ ՄՈՒՑԹՈՐԻՆ
ՈՐ ԵՒ ՍՊԱՆԻՆ ԶՆԱ

(Շար.)

Եւ ածեալ զօրացն զհրովարտակն ի թա-
գաւորէն և դիմեցին ի բանտ զնոտանին և
հանեալ զՄուֆթին անտի և եգին ի վերայ
բեռնակիր ձիոյ և առանց վերարկուի, և ի
գլուխն դօմբ մի եգեալ, այսինքն կէճէլիք
իմն, և ամբոխն գրոհ տուեալ առ ի փախ-
չել. և մունետիկն արգելեաց աղաղակելով
թէ մի՛ փախչիք, այլ զտեղի կալարուք և
տեսէք միթէ տա՛ իցէ անօրէն Մուֆթին Ֆէյ-
զուլլան, և այնպէս հրապարակաւ բերեալ ի
մէջ շուկայի՞, զգլուխն հարին բազում նա-
խատանօք: Եւ ի մէջ ամբոխին գտին զերէց

մի յազգէն յունաց և բռնութեամբ ածին
զնա, և ետուն նմա բերել զբուրվառն իւր
եւ զուրարն և արկին զչուան յոտա Մուֆ-
թուն և ետուն ի ձեռս երիցուն և քարչե-
լով տանէին ընդ փողոցս քաղաքին բազում
ամբոխիւք: Բայց զօրացն և զինուորացն
հարկեալ բռնութեամբ և ստիպէին հարկա-
նելով թէ՛ կարդա՛ երէց որպէս օրէն է ձեր՝
զի որպէս կարդայք առաջի մեռելոցն ձերոց,
այնպէս կարդա՛, պէ հէլ տինսիզ, իսկ երէցն
եղկելի վասն երկիւղին և վասն հարկանե-
լոյ նոցա զինքն, սկսաւ զձայնս արձակել
իր թէ կարդայր ասելով. «աֆօրօզ պէ գագօ-
նօզ ախըրիանօս պէ արիօս. սիզմաֆօս գէ
հէրէդիգոս անաղէմաս, ալաի բէլա վէրսին, նէ՛
սիզտէն տիր նէ՛ պիզտէն»։ զայս եղանակեալ
գեղգեղէր և քարչէր զգի նորին, և զօրացն
ծափ զծափի հարեալ ծիծաղէին և գնային
և այնպէս շրջեցուցեալ զբովանդակ փողոցն
քաղաքին նաև ի մէջ օրոտլին, և ապա
բերեալ ձգեցին զգէշ նորա ի պետն Թուն-
ճայ, առի կերակուր լինել զագանաց և թուշ-
նոց: Բայց աստ գիտելի է, զի մինչ սպանին
զՄուֆթին՝ և ապա խեղաբերեալ զգաստա-
ցաւ հին թագաւորն Սուլթան Մուսթաֆայ,
և սասց ցապասաւորան թէ զպատրաստու-
թիւն տեսէք զի ես ի Աք փունդարն կամիմ
գնալ. ասեն ցնա. ո՛ւր կամիս արդ գնալ.
քանզի մանգուլ¹ ես և իշխանութիւն քո
ել ի քէն և ոչ կարես այլ ուրեք գնալ: Յայն-
ժամ ապա գիտաց զինքն և հարցեալ ի շըր-
ջակայիցն զՀօճայն իւր թէ զի՞ եղեւ նմա,
ասացին թէ՛ սպանաւ: Եւ այն ժամայն յար-
տասուս հարեալ սկսաւ անիծանել զնա պէս-
պէս անարգանօք, և ասէր թէ «Դու Հօճայ,
որպէս որ զիս յայս կէտս հասուցեր, և այս-
պէս խեղճ արարեր որդւովքս իմով, խնդրեմ
յԱստուծոյ զի ի հանդերձեալն ի հոգիդ գըտ-
ցես, և որպէս զտունս իմ աւերեցեր՝ աւե-
րեցէ Աստուած զտունս քո և զտունս որդ-
ւոց քոց»։ Եւ մինչեւ ցայսօր անիծանէ զնա
և ոչ զադարէ: Արդ այսու պատճառաւ ստու-
գապէս երեւեցաւ կախարդ գոլ Մուֆթուն

¹ Մաագուլ, պաշտօնանկ:

այնմիկ . զի մինչ ոչ սպանաւ՝ կախարդական արհեստք նորին ոչ աւերեցան , և մինչ արհեստքն դիւթական թուլացան և լքան , խեղճ այն թագաւորն Մուսթաֆայ ոչ ծանեալ զինքն , և ոչ զվնասակարն իւր , բայց նէտէն սօնրա , զիրա իչ պիթտի :

Եւ ապա զօրացն որոնեալ՝ ոչ գտին զվէզիրն Բամի , և ոչ զԵնիչէրեաց աղայն . և ոչ զթէֆտէրտարն , և ոչ զքեանհա պէկն , և ոչ զղասապ պաշին , և ոչ զճէպէճի պաշին , և ոչ զՀոռոմ թէրճէման Սկէրլէտ օղլուն , և զայլս ի մեծամեծաց : Վասն որոյ մտեալ ի տունս փախողացն յաւար հարին զինչս և զապրանս նոցին : Բայց ապա գտին զՏէտէ Էֆէնտին՝ որ փախստական եղեալ էր . քանզի սա վասն կատարմանն Ստամպոլցոցն , ըստ սարասի ֆէթվայի մուֆթուն զհուճէթ տուեալ էր . վասն որոյ գտեալ զսա առաքեցին յիստամպոլ և արգելին ի բանտ ի կլայն եօթնեակ , ուր ճգնէր զբաղում աւուրս կրկին Լուսաւորինն մերս Հայոց Աւետիք վարդապետն Երզնկացի , որ համախոհն էր նոյն Մուֆթուն . հետեւող հետոց նորա : Յետ այնորիկ առաքեցին զՆախիպ զորդի Մուֆթուն , և զՂրզլար աղայի եսպրճին , զքեանհայ Մուֆթուն , և զթալխիսճի¹ նորին և զայլս ոմանս իբրեւ զարս քսան՝ կապանօք առաքեալ եդին ի կլայն եօթնեակի և արգելին ի բանտ . և յետ աւուրց ինչ հասին զգլուխն Նազիպին որդւոյ Մուֆթուն և զգլուխն տարեալ արկին առաջի դրան արքունական պալատին և ի ճակատն զգիր փակուցեալ թէ գլուխն է Նազիպին : Իսկ թագաւորն բաշխեալ ռոճիկան զօրացն առն միոյ քսան և հինգ դահեկան , վասն նորոգութեան թագաւորին : Եւ յետ այնորիկ պատրաստեցան ի ճանապարհ և առաքեցին յիստամպոլ զմանդուլ թագաւորն զաֆէսով , և զմայրն նորա , և զազգն կանանց որ ի պալատին , և ապա ել նոր թագաւորն և վէզիրն և աղայն և զօրքն ամենայն ի ճանապարհ , և մինչ ժամանեցին ի Հաւսայ , յաւարի հարին զնա ,

քանզի ի գնալն սոցա զդէմ եղեալ էին նոքա . վասն որոյ ի դառնալն իւրեանց զվրէժս առին ի նոցանէ : Եւ եկեալ բանակեցան արտաքոյ քաղաքիս Ստամպոլու , մերձ ի Տաւութ փաշա Սարայըն : Եւ ի վաղուեան առաւօտուն հանդերձ ալայիւք և հանդիսիւ մեծաւ իջուցին զթագաւորն ի յէյուպ Սուլթան մզկիթն որ արտաքոյ քաղաքիս կայ , քանզի օրէն է սոցա ի նախնեաց իւրեանց , զի նոր թագաւորին անդ զթուր կապեն և օրհնեն . և ապա ևս զթուր կապեալ և աղօթս արարեալ , զարձան անտի մեծափառ սառօք¹ և եկեալ մտին ի քաղաքս , որոյ թագաւորիս մուտն ի քաղաքս չնորհաւոր եղիցի , և Աստուած աշխարհիս զխաղաղութիւն տացէ , և եւս յազգիս մերոյ . և նըստաւ ի գահս թագաւորական , Սեպտեմբերի ամսոյ ի վեց . յաւուր երկուշաբթի պահոց Սուրբ Խաչին :

Աստանօր ո՛վ ընթերցող եղբարք իմ նազելիք և ուկնդրողք բանիս , զայն ծանուցեալ գիտաջիւք , զի ամենայն թագաւորութիւնք և իշխանութիւնք ի ձեռին ամենազօրին և ամենակարողին Աստուծոյ և ամենայն իշխանութիւնք նովաւ նորոգեալ կանգնին և հաստատին , և նորին հրնամանաւ աւերին եւ կործանին . զի նա է տնօրինիչ յամենայնի . նա միայն է եւ ոչ այլ ոք ըստ գրոց : Վասն որոյ իրս այս (զ)որ գրեցաւ՝ նորին կարողագունեղ զօրութեամբն գործեցաւ : Քանզի մեծ սքանչելիս երեւցաւ իրս այս յաւուրս յետին չքնաղ եւ զարմանալի , զի թէպէտ զյազում իրս եւ զպատերազմունս լուեալ եմք , և զփոքր ինչ ընթերցեալք ի վաղեմեաց ժամանակաց , Սակայն այս գործ յոյժ հիանալի երեւեցաւ մեզ , քանզի եթէ գործս այս ի ձեռս մեծամեծաց իշխանաց գործեցեալ եւ աւարտեալ լինիւր , ոչ էր զարմացման արժանի , և ոչ կարի զարմանալաք : Քանզի մեծամեծք հզօրք են եւ բուռն են իշխանութեամբ եւ զոր իրս կամին՝ առնեն : Արդ վասն այնորիկ հիացեալ զարմանամք , զի ի ձեռն չնչին եւ յետնեալ

¹ Թէլիսիյս , համառօտաբեր որ կը մատուցուէր թագաւորին :

¹ Կառօք ? կամ սարօք ?

զօրացն սկսեցեալ եւ եղիւ եւ յառաջացաւ , եւ այն ի ձեռն փասքուս երեսուն կամ քա-
ռասուն արանց :

Քանզի զօրքն ճէպէճոց անարգ են յաչս
ամենից եւ յետին ի մէջ զօրաց թագաւո-
րին : Բայց աստ հաւաստի բան Սրբոյ առա-
քելոյն որ ասէ փոքր ինչ հուր՝ զամենայն
անտառն հրդեհէ եւ կիզու : Արդ ըստ
նմին սարասի փոքր ինչ անզօր զօրքն՝ զգոր-
ծըս մեծամեծս գործեցին . այսինքն՝ զորս
փոխեցին , զորս հալածեցին եւ զոմանս ի
մեծագունիցն սպանին : Արդ եղբարք որպէս
ոչ զարմասցուք թէ զիա՛րդ յաջողեցաւ եւ
օր ըստ աւուր յառաջ ընթացեալ ճարակեալ
լսինացաւ , եւ մինչեւ ցթագաւորն եհաս :
Զիա՛րդ ոչ հիանամք որք զմեծամեծ արսն
յինքեանց բանից հնազանդեցուցին : Հիբա՛ր
ոչ սքանչասցուք՝ որ զմեծահանդէս քաղաքս
համանդամայն յինքեանս դարձուցին : Որկէ՛ն
ոչ պահուցումք որք առանց թագաւորի
զվէզիրս հաստատեցին , զՄուֆթի եղին ,
զԵնէիլէրեաց աղայս՝ արարին : Մանաւանդ
որպէս զբազմամբոյն ժողովան զօրաց միա-
խորհ եւ համակամ արարին : Իրաւի եւ ստու-
գապէս հիացման արժանի , թէ որպէս հարիւր
հազար արամք՝ եւ այն խաթամուժ ամբոյն
եւ համալ ճամալ զդէմ կալան , երեք հարիւր
հազար պատերազմող արանց , եւ յազթեցին
զնոսա : Այլ այս է ճշմարիտն , որպէս Մար-
գարէն Մովսէս հիացեալ ի վերայ ամենամեծ
գօրութեան Աստուծոյ եւ ասէ . թէ զիա՛րդ
մինն զհազարս հալածեցէ , կամ երկուքն
զբիւրն շարժէ , եթէ ո՛չ զօրութեամբ Աս-
տուծոյ : Զոր եւ բազումք գոն վկայութիւնք
ի գիրս Աստուածայինս ի սկզբսնէ արարա-
ծոց մինչեւ ցայսօր եւ մինչեւ ցվախճան աչ-
խարհիս : Որպէս եւ գրեալ է ի գիրս Սուրբս
եւ վիպասանեալ գրութիւնս պատմագրացն
զմեծամեծ զսքանչելիան Աստուծոյ : Քանզի
կատարելոց են բանք աստուածայինք , աւե-
տարանականք , մարգարէականք նաեւ ֆիլի-
սոֆայականք : Որպէս ասէ ոմն յիմաստնոցն
թէ ամենայն կատարեալ շինուած՝ սկիզբն է
աւերման : Արդ որպէս Մուֆթին այն այնչափ
յառաւելեալ մինչ զի միայն այն մնաց որ ի

թագաւորական գահս ոչ նստաւ . բայց զայլ
ամենայն իշխանութիւնս եւ զհրամանս թա-
գաւորական իւրով հրամանաւ վարիւր :
Դարձեալ որպէս մարգարէն հրամայէ թէ
հասուցանէ Տէր այնոցիկ՝ որք առաւել առ-
նեն զամբարտաւանութիւն : Եւ Տէրն մեր
Յիսուս Քրիստոս հրամայէ եթէ «Ո՛չ արասցէ
Աստուած վրէժինդրութիւն այնոցիկ որք ա-
ղաղակենն առ նա ի տուէ եւ ի դիշերի» :
Ճշմարտէ եւ ասէ դարձեալ , «այո՛՛ ասեմ ձեզ
արասցէ վրէժինդրութիւն» :

Այսպէս նորդեան¹ զբողոք աղաղակո-
ղացն տաճկաց եւ հայոց , հոռոմոց եւ Ասո-
րոց եւ այլոց ազգաց , լուսւո ամենաողոր-
մածն Աստուած եւ զթացեալ ի վերայ ծա-
ռայից իւրոց , որք լալով եւ արտասուելով ,
այրելով եւ մորմոքելով , հառաչէին եւ զոյս
եւ զհոգս իւրեանց առ Աստուած ձգէին :
Վասն որոյ նախախնամիչն յամենայնի քաղց-
րացեալ վաղվաղակի արար վրէժինդրու-
թիւն , քանզի ոչ ժուժեալ երկայնմութեանն
Աստուծոյ . յամբարտաւանութեան եւ յանի-
րաւութեան գոռողին յայնմիկ , եւ հատոյց
զհասուցումն ըստ չար գործոյ նորին , եւ
խայտառակ մահուամբ երարձ յաչխարհէս ,
զինքն եւ զհամախոհս իւր ընդ նմին , որպէս
զկախարդն Սիւնն : Վասն որոյ եւ մեզ պարտ
է առտանօր , զփառս եւ զերկրպագութիւնս
մատուցանել Տեառն Մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի եւ Աստուածութեան նորին , որ կեայ
եւ թագաւորէ մշտնջենաւոր յաւիտենիս ի
դարս եւ ի ժամանակս՝ նմա փառք եւ պա-
տիւ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ
անդրաւ յաւիտենիւ ամէն :

Վ. Ե Ր Զ

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
ՍՈՒԱԶԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՅԵՄՏԱԿԱՐԱՆԵՐՈՒՆ ՄԵԶ
(Շար.)

Միեւնոյն խորհրդանշանի կրնայ վերած-
ուիլ նաեւ շատ յարգի արձանագրութիւն մըն
ալ , որոյ վրայ պիտի խօսիմ ձեզ վերջը , ե
որու մէջ Ս . Հաղորդութիւնը կը կոչուի .

¹ Զարդիս , հիմա :

մեղրի պէս քաղցր կերակուր»։ Բայց Գոհութեան խորհրդոյն եւ ոչ մի ներկայացուցումն եւ օրինակն ա'յնքան խորհրդաւոր է անշուշտ, որչափ «Ձուկ»ը։ Այս խորհրդանշանին պատմական հաւաստի ծագումը բացարձակ ստուգութեամբ ճշգրիտ եւ հաստատել անկարելի է. սակայն եւ ա'յնպէս ա'յն ալ ստոյգ է որ զայն առ հասարակ ընդունուած կը գտնենք քրիստոնէութեան սկիզբէն ի վեր եւ շարունակաբար գործածուած մինչեւ խաղաղութեան օրերը։ Գալով անոր նշանակութեան, ոչ զոյգը հաւանութեան է ոմանց մեկնութիւնը թէ ան ծագումն կ'առնու Սիբելեան մատեաններէն ուր յունարէն իխքիս (ձուկ) կը մեկնաբանուի հոշակաւոր վերադառնութեամբ զոր նոյն բառին մէջ մի գիրերը կը կազմեն։ «Իսուս Խրիսթոս Թեոս Սօբիւ» այսինքն է Յիսուս Քրիստոս Աստուծոյ որդի Փրկիչ, որով եւ այդ բառը (Իխքիս), եւ ձուկի պատկերը քրիստոնէից համար շատ գործածական խորհրդանշան մը, պատկերագիր մը դարձած էր։ Դարձեալ այս խորհրդանշանին ուրիշ տեսակ մեկնութիւնը կարելի է գտնել սա գաղափարի մէջ թէ ձուկը, ծովու մէջ ծնելով, կը ցուցնէ աստուածային զօրութեան մեծութիւնը. եւ կամ որովհետեւ ձուկ մը, զլիւնը, միշտ նկատուած է իբր բարեկամ եւ փրկիչ մարդոց։

Սակայն Սիբիլայից մատեանին մեկնաբանութիւնը որու մէջ կը գտնուի յիշեալ նշանաւոր վերադառնութիւնը, մեր օրերը երեւան եկած է թէ Մարկոս-Աւրելիոսի ժամանակի մէկ եպիսկոպոսի Հրէի մը յարմարեցում գործն է. զոր երրորդ դարու անժամօթ քրիստոնեայ մը կոկած է. եւ առաջին անգամ զայն մէջ կը բերէ Նեստորոս, ապա Ս. Օգոստինոս եւ չորրորդ դարու ուրիշ հեղինակներ։

Արդ, մենք յիշատակարաններու վրայ ստէպ կը հանդիպինք ձուկի պատկերին՝ հացի հետ ի միասին. և տարակոյս չի վերջնոր բնաւ թէ Նիկիոյցեոյ քանի մը Հայրեր, խօսելով այս խորհրդանշանին վրայ, բացայայտ ակնարկութիւն կ'ընեն հացի հրաշալի բազմապատկութեան զոր Քրիստոս ըրաւ հազա-

րաւոր մարդիկ կշտացնելու համար անապատին մէջ. և նաեւ ա'յն հացին՝ զոր Քրիստոս կերաւ իր աշակերտներուն հետ՝ յարութենէն վերջը, ինչպէս ցոյց կու տայ զայն Ս. Օգոստինոս՝ սա խօսքերով. «Ձուկն խորովեալ՝ Քրիստոսն է չարչարեալ»։ Ուստի ես կը խորհիմ որ շատ աւելի բնական ու ճշմարտանման է որ այս խորհրդաւոր նշանին պատմական ծագումը առաջ եկած ըլլայ ամբոխին համար (ձուկի հետ) բազմապատկուած հացէն, և աշակերտացը հետ Տեառն մերոյ (ձուկի հետ ի միասին) կերած հացէն, աւետարանական երկու դէպքեր, որոնց մէջ ձուկի դերը կարի կարեւոր եղած էր, և զոր Քրիստոս ինքնին ցոյց տուած էր իբր կերակուր իր հաւատացեալներուն, Կարելի է նաեւ որ այս առաջին գաղափարը մտածել տուած ըլլայ վերոյիշեալ հնարիմաց հիւսուածքի տառերուն որ կը կազմեն յունարէն իխքիս բառը, որ կը ներկայայնէ ձեւն հաւատոյ դաւանութեան ի Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ Փրկիչ աշխարհի. և նաեւ աստուածաշնչական ա'յն յիշատակութիւնը ձկան, որ աշացոյց դարձեալ տուաւ ծերունաւորդ Տովբիթի, առակ օրինակի ա'յն լուսոյն զոր յայտարար բերաւ Փրկիչը, չէր կրնար օտար ըլլալ այս խորհրդաւոր մտածմունքէն։ Լոյսի և անուշիկի այս գաղափարին շատ յաւ կը յարմարին Պրոսպեր Ագուիտանացեոյն խօսքերը, որ գրեց Քրիստոսի վրայ. «Որ երեւցաւ ի ծովափնն առակերսացն, ընծայելով զանձն բովանդակ աշխարհի ԻեթիՍ (ձուկն), յորոց ի ներքին դեղոցն դարմանոյ հանապազօր լուսաւորիմք եւ սնանիմք»։

Ուրեմն ձուկը, կանուխ ժամանակաց յիշատակարաններուն մէջ ճշմարտապէս Քրիստոսի ծածկագրական և հանդիսաւոր խորհրդանշանն է. բայց, ցարդ իմ մասնաշնչած պատճառներու համար, մասնաւոր եղանակաւ մը ի յուշ կ'ածէ զՔրիստոս Ս. Հաղորդութեան Խորհրդոյն մէջ։

Կը ներկայացնէ պարզապէս մեր Տէրը Յիսուս Քրիստոսը՝ իբր առանձին է, եւ կամ գրուած է գաղափարագիր նշանի մը պէս, աւարտելու համար արձանագրութեան մը

խօսքը, ինչպէս Պրիսկիլլայի շատ հին գե-
րեզմանատան մէջ կայ քարի մը վրայ. հոն
կը կարդանք սա ընդհատուած խօսքը. «Ա-
ղեքսանդր ի...» և անմիջապէս վերջը ձկոն
մը պատկերը երկաթածարով դժուած որ
դրուած է փոխանակ կատարեալ գրելու՝
Քրիստոս. Նոյնպէս պզտիկ խորանի մը վրայ,
որ հին Վատիկանեան եկեղեցիէն մնացած է,
ձուկի մը պատկերը քանդակուած է, որոյ
տակի արձանագրութիւնը կը մեկնաբանէ
խորհրդանշանը սպայէն. «Ձուկն կենդանեաց»:

Նոյն կերպով գլխինը, այսինքն մարդուն
փրկիչ ձուկը՝ գետնադամբաններու յարգի մէկ
որմանկարին մէջ ներկայացուած է իբրեւ
կաշկանդուած եռոտանիի, որ խորհրդանշանն
է խաչի. քծղածածուկ և խորհրդաւոր կեր-
պով հասկցնելու համար Քրիստոսի Ուաշելու-
թիւնը. զոր չէին համարձակեր նախնի քրիս-
տոնեաներու ներկայացնելու իւր բոլոր պատ-
ժական իրականութեանը մէջ:

Այս գլխաւոր գաղափարէն կը ծնանի ու-
րիշ մըն ալ, որով երբեմն ձուկը կը նկատուի
իբր խորհրդանշան քրիստոնէից որոնք Քրիս-
տոսի գաւակներն են եւ Անոր նմանող բլա-
ղու պէտք է աշխատին: Ասոր համար Տեր-
տուղիանոս իր Յաղագս Մկրտութեան գրքին
մէջ ըսած է թէ մենք ձկնիկներ ենք, որոնք
ըստ օրինակի մեծ ձկան որ է Յիսուս Քրիս-
տոս, վը ծնանինք շնորհքի ջուրին մէջ և
անոր մէջ մտաւ ենք. «Մեք ձկուցմ մա-
նուցմ քս իխթիսին մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի ի ջուր ծնանիմք. եւ միայն ի ջուրն
կտցեալ մնացեալ ապրեցաւ»: Այս ոճը կը
մեկնէ մեզի թէ ի՞նչու կը պատահինք եր-
բեմն պզտիկ ձուկերու որ ժողովուած են
խաբսիսի մը շուրջը որ օրինակ է խաչի եւ
յուսոյ. այսպէսով ցոյց տալու համար վըր-
կագործութեան վրայ հաւատացեալներուն
ունեցած յոյսը:

Բայց ձուկը՝ երբ ի միտքին գտնուի հա-
ցի հետ, առանձին նշանակութիւն մը կը
ստանայ, եւ անսարակոյս կը ներկայացնէ
Ամենասուրբ Հաղորդութիւնը:

Եւ գետնադամբաններու բազմաթիւ որ-
մանկարներն որոնք կը ներկայացնեն Քրիս-

տոսի բազմապատկած հացերուն հրաշքը,
այս իմաստով յորինուած են. անոնց վրան
շարունակ կը տեսնուին, տրուեստական
կարգով մը շարուած, հացով լեցուն սակաւ-
ներն որ մնացին, ըստ աւետարանական
պատմութեան: Այս տեսարանը կը ներկայաց-
ուի երկու կերպով. թէ՛ այն վայրկեանին
յորում Քրիստոս իր աշակերտներուն կը բաշ-
խէ հացն ու ձուկերը. թէ՛ ինչոյքի մէջ յո-
րում հրաւիրեալներն կ'ուտեն հաց եւ ձուկ:
Այս վերջին կերպը, դէպքին պատմական ի-
րականութենէն հեռանալով, դեռ աւելի
բացայայտօրէն կը ցուցնէ մեզի խորհրդա-
նշական գաղափարը եւ յայտ յանդիման առ-
ջեւիս կը դնէ նոյն իսկ հաւատացելոյ Ս.
Սորհրդոյ հաղորդութիւնը գործողութիւնը:
Միեւնոյն գաղափարը նոյնպէս շատ յայտնի
կերպով ի հանդէս բերուած է Ար. քաղաքին
մէկ վիմապազդին վրայ. հոն կայ սեղան
մը՝ վրան ձուկ, ճիշդ հացի բազմապատկու-
թեան հրաշքի նկարին քովը. արդ սեղանը
չի կրնար բնաւ ամենեւին մաս մը նկատուիլ
առտուածաշնչական այն պատմութեան, հե-
տեւարար, առանց տարակոյսի ստուերին
անգամ, ի ցոյց կը բերէ այս իմբանկարին Ս.
Հաղորդութեան համար յորինուած ըլլալը:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գրք. Ա. — Ե. Ժ. — Բարի կրօնաւորի մը երանագոյցը
վրայ:

(Շար.)

Երբ յեւ կրնար շարունակ ամփոփել միտք, գոնե
երբեմն ըրէ՛, եւ առ նուազն օրը երկու անգամ, այսինքն
ստաւոս իրիկուն:

Առաւօտն առաւօտիկ՝, երեկոյին՝ ինձ՝ վարդ,
թէ ի՛նչպիսի վարուեցար այսօր խօսքերուդ, գործերուդ
եւ մտածմանցդ մէջ. վասն զի կարելի է ասոնցմով
սեռայ զԱստուած ու ընկերդ վշտացուցիր:

Գօթեպնիկ՝ զգեզ, իբրեւ այր քաջ, սասանայական

խառնեանց դեմ. սակձե՛ք որչորոք, ու մարմնոյ ամեն շար միտքովն զիշուալ պիտի ստեղծաբերեալ:

Երբեք թոշոնովի զստարկ լի կենար. հապա կամ կարդա՛, կամ գրե՛, կամ աղօթե՛, կամ մտածական ըրե՛՝ եւ կամ հասարակաց օգտակար աշխատութիւն մը կատարեալ:

Սակայն մարմնաւոր աշխատութիւնները պիտի ի խոհեմութեամբ կատարել, եւ ամեն ոք զանոնք ստեղծելու չի:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս Մեսրոպ երբ իր այս կրօնասիրական և ազգասիրական խորհուրդը Ս. Սահակայ յայտնեց, շատ ուրախացաւ՝ տեսնելով թէ ան իրմէ աւելի փափաքող է նոյնին իրադարձման: Աւատի երկուքը մէկտեղ սկսան ամէն կերպով աշխատել հայերէն լեզուին յատուկ գրեր գտնելու. և երբ ուղարկուեալ պէս չկրցան յաջողիլ, եւ անհաշու ազօթքով Աստուծոյ գիտեցին: Գիշ վերջը Առաքաւորն թագաւորէն խնայողով թէ Միջագետաց կողմերը Գանիէլ անունով ասորի եպիսկոպոսի մը քով հայերէնի համար յօրինուած յաշնական տառերու ձեւով գրերի կը գտնուին, արքունի հրամանաւ հաւատարմով անձ մը ղրկեցին, որ գնաց նոյն գրերը սորվեցաւ և դարձաւ: Այս Սահակ և Մեսրոպ կարծելով թէ նոյն գրերը բաւական են հայերէն լեզուի համար, ուշիմ պատմիչներ ժողովեցին և սկսան անոնց հայերէն սորվեցնել նոյն գրերով:

Երկամայ աշխատութեան վերջ՝ տեսնելով թէ այն տառերով կարելի չէ հայերէն բառերը անվթար հնչել, դարձեալ մտաւ մտնելով իր անհաշու Մեսրոպ ինքնին մի քանի աշակերտներով Միջագետք գնաց և այս մասին շատ իմաստուն տեղեւոր և խորհուրդ հարցուց. բայց օգուտ չտեսաւ: Աւատի մարդկային հնարքներէ յոյսը կտրելով ըզրոյովին Աստուծոյ ապականեցաւ և տեսիլքի մը մէջ Աստուծոյ ընդունեցաւ հայկական տառերը: Ասոր վրայ Մեսրոպ ձեռք գործեալ անմիջապէս Սուրբ Գիրքը յաւանդեց հայերէն թարգմանելու. և ամենէն առաջ Գրքոցի աղոց համար Սողոմոնի առակները թարգմանեց և Հայաստան բերաւ:

Ս. Սահակ անպատմելի ուրախութեամբ ընդունեցաւ Ս. Մեսրոպը և Աստուծոյ սրտագին գոհութիւն մտաւ այս մեծ յաջողութեան համար. և թագաւորն հաւանութեամբ աշխատայ տեղի գրչութիւններ բանալ տուաւ, որպէս զի անմիջապէս հայերէն զարգութիւնը տարածուի Հայաստանի մէջ:

Այս միջոցին մի քանի եպիսկոպոսներ և վարդապետներ Ս. Մեսրոպի հետ գացին Ս. Սահակի մօտ, և Վառաժապուհ թագաւորին և առաջանալոյն առջեւ աղաչեցին անոր որ Մեսրոպի հետ Սուրբ Գիրքը հայերէն թարգմանէ: Ս. Սահակ հաւանեցաւ ժողովին առաջարկին, որ հոգալով փրկութեան համար այնքան կարեւոր կը տեսնէր: Եւ Աստուծոյ լիզայ յոյսը

դրած, աջակցութեամբ Ս Մեսրոպի և իր գլխաւոր աշակերտներուն, յատկապէս Կզնիկ Կողբացուն, ձեռնամուխ եղաւ Հին և Նոր Կտակարանները թարգմանելու, նախ ասորիէնէ և ապա յաւանդէնէ: Եւ թանաթից ընտիր թարգմանութեան համեմատ:

Սուրբ Գրքը թարգմանութեան միջոցին, թարգմանեցան նաեւ շատ սուրբ Հայրերու և վարդապետներու մատեններ և ուրիշ գիտական գրքեր, որոնց շնորհիւ ուսումնական ոգեւորութիւն մը առաջ եկաւ Հայաստանի մէջ և կազմուեցաւ մեր գրչութեան ոսկեդարը:

Երբոր Վառաժապուհ բարեպաշտ և ուսումնասէր թագաւորը վախճանեցաւ, նախարարները Ս. Սահակի աղաչեցին որ անձամբ Պարսից Դուռը ելլալ և ջանալ գարձեալ թագաւորեցնել խորով արքան, որ Պարսկաստանի մէջ բանտարկուած էր, Սուրբ Պապ կոստան գնաց և իր իմաստութեամբ համոզեց Յազկերտ Պարսից թագաւորը և նախարարաց առաջարկը կատարել տուաւ:

Բայց քիչ վերջը երբ խորով թագաւորը մեռաւ Յազկերտ Հայոց թագաւոր դրաւ իր Դուռը հորդին, որպէս զի կամոց կամոց Հայոց միտքն ու սիրտը ապականէ ու զանոնք Պարսից կրօնին ընտելացնէ: Բայց Ս. Հայրապետին արթնութեան շնորհիւ Հայաստան անվատեց: Մնաց Յազկերտի խաղաղամտութիւնը: Դարձեալ Ս. Սահակի աղաչանքով Յազկերտ դադարեցուց Պարսկաստանի մէջ քրիստոնէից դէմ հանուած հալածանքը:

(Շարունակելի)

ԱՆՊԱՏԿԱՌ ՍՈՒՏԵՐ

Արդի ընկերութեան անկրօն ու անբարոյ և մանաւանդ Պրանմաստական խաւերուն մէջ, մինչեւ անխղճութեան աստիճան կը գործածեն Վօլթէրի անամօթ առածը. «Ստեցեք, միշտ ստեցեք, անշուշտ ատկէ բան մը կը մնայ»: Սուտերը հեղեղի նման կը հոսեցնեն մանաւանդ լրագրութեան մէջ, անշուշտ մի քիչ տիւղ կը մնայ: Մեր մէջ ալ այս արուեստը գործածողներ կան, խիղճն ու ամօթը մէկդի նետելով: Սակայն Իսալիոյ աղանդաւորները յանդպնեցան վերջերս մինչեւ իսկ Ս. Բանանյապետին անձին հետ խաղաղ անամօթարար: Ծանօթ է ամէնուն որ Թանկօ անունով Հարաւային Ամերիկայի անբարոյական միջավայրներէն բերուած բացարձակապէս անբարոյացուցիչ մէկ պարը որ սկսած էր խղճամիտ անձանց երկիւղ ազդել

եւ ձայներնին բարձրացնել, իստիւ գատու-
պարտուեցաւ Կաթողիկէ աշխարհի բոլոր
եպիսկոպոսներէն, ապա եւ Ս. Քահանայո-
պետէն. և Վեհապետներն ալ վտարեցին
զայն իրենց արքունական իւրախճանու թիւն-
ներէն, և Պատերազմական նախարարք ար-
գիւեցին իրենց սպաներուն, և ամբողջ հա-
ւատացեալք գարշանօք մերժեցին այդպիսի
նողկայի և սատանայական հնարք մը:

Արդ տեսէք հիմա ամբարշտութիւնը,
Հոռոմի ձօրնալէ տ'իբալիա մասօնական ան-
կրօն թերթը իբր թէ այս արգելքին վրէժը
լուծելու համար, ինչպէս զայրոյթով կը
պատմեն Օսերկորթէ Բօմանիօ, Զիվիթա՝ և
միւս ամէն Կաթողիկէ թերթեր, անցեալնե-
րը գոթիային սուտ մը յերիւրեր է. իբրեւ
թէ Ս. Քահանայապետը Հոռոմի ազնուական
գերդաստաններուն պատկանող երկու երի-
տասարդներ հրաւիրելով ի վատիկան, իր
առջեւ այդ անիծից արմատ պարը պարել
տուեր է. անոր ինչ ըլլալը հասկնալու հա-
մար. ապա այդ երիտասարդները խրատեր է
որ Վենետիկոյ գաւառին Ֆուրլանա կոչուած
պարը թող սորվին. այսպէսով այդ պարը
իբրեւ թէ Ազնուականութեան մէջ սկսեր է
ոգեւորութեամբ իաղցուիլ, մինչեւ իսկ ա-
նունը «Պապին պարը» դրուեր է: Այս անօ-
րէն սուտը սակայն՝ նման անկրօն թերթե-
րուն հաճելի անցնելով, սկսեր է չըջան ընել
ո՛չ միայն յիշատակաւ, այլ եւ ի Ֆրանսա:

Արդ, մինք ինչո՞ւ կ'ակնարկենք առ այս.
չէ՞ մի որ քրիստոնեայ աշխարհին մէջ ամէն
մարդ մէկէն կը հասկնայ այդ անամօթ հնար-
քին սուտ ըլլալը: Այո՛. բայց տեսէք թէ
մեր միջավայրն ալ այդ ապրանքին ներա-
ծութիւն կ'ընէ, ողբալի բան. և իբր իրա-
կան պատմութիւն մը առանց այլեւայլի կը
տպուի Բեյամ թերթին գիտական (?) յաւել-
ուածին 12 թիւին մէջ, փետր, 17—2 Մար-
տին մէջ: Ո՛րքան ցաւալի եւ զարմանալի
երեւոյթ մըն է այս, մանաւանդ թերթի մը
կողմէ որ իրեն նպատակ դրած է հասարա-
կութիւնը կրթել, դաստիարակել ! ! . . . Այս-
պիսի թերթի մը բնաւ ներքի չի կրնար ըլ-
լալ այսքան ստորնութեանց թարգման ըլ-

լալ: Բեյամ թերթը ըստ բաւականի կը կար-
գացուի նաեւ քրիստոնեաներէ. թող ար-
թուն ըլլան լարուած որոգայթներսն և
սորվին, առ հասարակ, կարեւորութիւն չտալ
ու եւ է թերթի արտառոց հրատարակութիւն-
ներուն, զոր կ'ընեն գրեթէ միշտ յետին դի-
տումներով կամ սոսկ չարաշահութեամբ:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՅ ԾԱԳՈՒՄԸ

— (ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Ա Ռ Ա Զ Ի Ն Ա Ս Տ Ղ Ա Բ Ա Շ Ի Ն Ե Ր Ո Ւ)

... Շատ հետաքրքրական է գիտնալ թէ ե՛րբ
տեղի ունեցեր են աստղերու կամայական խմբում-
ները որ համաստեղութիւն կը կոչուին:

Քրիստոսի թուականէն 280 տարի առաջ Արա-
տոս քանաստեղծը՝ Յեւոյթներն ու Նեաճներն անու-
նով քերթուածի մը մէջ մանրամասնօրէն կը նկա-
րագրէ երկինքը. բայց այս մատենագիրը իր քեր-
թուածին նիւթը առած է ուրիշ երկասերութիւնէ
մը, զոր յօրինած է Եւդոքսիոս՝ իրմէ դար մը առաջ:

Ուստի հարկ է դեռ շատ աւելի վաղեմի ժա-
մանակներուն մէջ միտնիլ: Եգիպտական յիշատա-
կարանները կը պարունակեն արդարեւ աստղերու
աստեղատներու (համաստեղութիւն) անուններ,
բայց այդ գիտութիւնն ալ կը հիմուկի անշուշտ
աւանդութեամբ փոխանցուած նախնազոյն ծանօ-
թութիւններու վրայ:

Եգիպտացիներն ալ թերեւս Ասորեստանցիներէն
առած էին իրենց աստղաբաշխական գիտելիքները:

Իրօք ալ կը տեսնուի որ Նիւուէի Սարգոնեանց
օրով, այսինքն Քրիստոսէ եօթը, ութը դար առաջ
պոլլատական աստղաբանները գրատախտակներու
վրայ — որոնք այժմ կարելի եղած է ընթեռնուել —
լուսնի եւ մոլորակներու դիրքերը, ծանօթ համաս-
տեղութիւններու համամատուցեամբ նշանակելու
ստիպուած են: Արդ այս համաստեղութիւնները,
թիւով տասուերկու, ճիշդ մեր կենդանակամարին
համաստեղութիւններն են, եւ առաջին նշանն է
Խոյը:

Ուստի այն դարուն ծանօթ էր արեւուն երե-
ւութեան շարժումը, տեղափոխումը, որով ան՝ ու-
միսը մէկ երկնային նշան կը կտրէ կ'անցնի: Հսն
կը տեսնենք թէ շրջանակը 360 աստիճանի բաժ-
նուած է, արեւը՝ օրը գրեթէ մէկ աստիճան կը
յառաջանայ, եւ մօտաւորապէս 360օրեայ միջոցէ
մը (տարի) վերջը կը հասնի իր առջի տեղը:

Այս ծանօթութիւնները հաստատուած են
Նիւուէի կործանումէն (607 Ք. ա.) կանխագոյն յի-
շատակարարներով:

Բաբելալացիք երկնադուռնդին առերեւոյթ շարժմանց ուսուցիչ այս Ծանօթութիւններով չէին սահմանափակեալք, կենդանապամարը՝ անոնց համար աւելի տեսական կարեւորութիւն մը ունէր, ան կը պարունակէր հետազօծեցը (trajectoires) ոչ միայն մոլորակներուն այլ նաեւ արեւուն, ինչպէս նշանակեցինք: Արդ արեւուն այս երեւութական հետազօծը՝ երկնադուռնդին մէջ մեծ շրջանաւոր է որ մենք ծիր խաւարման կ'անուանենք, եւ Բաբելալացիք այս ծիրն կը համեմատուին, ինչպէս կ'ընեն արդի աստղաբաշխներն ալ, ամէն աստղերու դիրքերը:

Այս ամենուն վրայ կարելի չէ տարակուսի՝ մանաւանդ յետ հոյակապ երկասիրութեանց Հ. Էպպինգի, որ ցոյց տուաւ թէ այն դարուն արդէն իսկ կը գտնուէր հիմնական աստղերու ցուցակ մը։ Վաղեմի գրատախտակները կը յիշեն այս կարգի երեսուն աստղեր իրենց բազելական անուններով, սակայն մենք կ'անգիտանանք անոնց տրուած դիրքերը։

Այժմ կարելի եղած է աւելի եւս առաջ երթալ դէպի անցեալի խորը, եւ հաւաստուել որ Յաբելացիք իրենց գիտութեան մէկ մասը քաղդէացիներէն առած են Սակայն հնախօսները մեր կենդանակամարտին մի քանի անուանեալ միայն կրցեր են գտնել քաղդէական գրատախտակներուն վրայ:

Բայց հոն ճշդիւ որոշուած է գարնան սկիզբը, որ, այն դարուն, արեւուն ջուլ համաստեղութեան մէջ գտնուած ատենին կը հանդիպէր:

Կարիճ համաստեղութիւնը կը սկսէր աշնան, անոր յաջորդ նշանները, ջրային էին, ինչպէս պատշաճ է երկրին ձմեռնային եղանակին:

Արդ, աստղաբաշխներու շատ ծանօթ երեւոյթի մը շնորհիւ, յայտնի է թէ երկինքի բեւեռը գրեթէ քսանըվեց հազար տարուան մէջ կատարեալ շրջան մը կ'ընէ, եւ այնպէսով երկնակամարին վրայ եղանակներու սկզբնաւորութեան՝ յետամնացութիւն մը յառաջ կը բերէ. ուստի դիւրին է գտնել այն դարը, ուր տեղի ունեցեր է փաղէտական կենդանակամարին յօրինումը։ Այս հաշուով յիշեալ քաղէական գրաւումատակները Բրիտանոսի թուականին 3000 տարի առաջ գրուած կ'ըլլան։

Այս բանս կը հաստատուի նաեւ հիներէն մեզի հասած համաստեղութեանց ամբողջութենէն բխող տրամաբանական ելլականութիւններէն:

Արդի աստիճաններէն, որոնց թիւը 80էն մինչեւ 100 կը հասնի, 48ը կը գտնուին ծանօթ ամենահին ցուցակէն վրայ, որ գրած է Հիպպարքոս մեր թուականէն 150 տարի առաջ:

Բայց Հիպպարքոս աստղերուն դիրքերը միայն որոշեր է, իսկ անոնց անունները առեր է արդեն գոյություն ունեցող ցանկէ մը որ սերունդէ սերունդ փոխանցուած կը թուի:

Առնուհանդերձ Երկնագլուխը մը եւ անոր վրայ գետն-
դէնք Հիպպարքոսէն յիշուած 48 համաստեղու-

Թիւնները, կը տեսնենք որ գուռդին վրայ մեծ միջոց մը դատարի կը միայ: Զարմանալու չէ. ուրովհետեւ այս դատարիկը կը համապատասխանէ ճշդիկ հարաւային բեւեռին, որ անծանօթ էր հին աստղաբաշխներու:

Ուստի ասոնք իրենց յիշատակարանները կ'առնուն հիւսիսային գաւառ մը բնակող ժողովուրդներէ: Եւ հաշիւը ցոյց կու տայ թէ առաջին դէտեքուսն ինսպեկտորին լայնութեան աստիճանը հիւսիսային կիսագնդին 38ին մօտ է...:

Կը ռուսայ ճշգրէ՛կ հին համաստեղութեանները ուրոշող դէտերո՛ւն բնականվայրին երկայնութեան աստիճանը: Եւ այս բանն այնչափ դժուար չէ, որովհետեւ նկատելով թէ այս աստեղացն մէջ կը պակսին փիղը, Ուղտը, Վագըը, Կոկորդիլոսը. կը հետեւցնենք որ այս համաստեղութեանց առաջին հարիւրններուն բնականվայրը հարկ է փնտռել Հնդկաստանի արեւմտեան եւ եւրոպայի արեւելեան կողմերը:

Ուստի կը ստիպուինք եզրակացնելու թէ հա-
մաստեղութեանք հնարիչները կը բնակէին փոքր
Ասիոյ եւ Հայաստանի մէջ: Անոնք կը պատկանէին
քաղաքակրթեալ ազգի մը, որ ընտանացուցեց իր
ոչխարը, այծը, եղը, շունը, ձիւն. որ կ'որսար արջը,
սուկե՛ծը, նապաստակը եւայլն, աղեղով եւ նետով,
որովհետեւ այս ամէնը խորհրդանշուած են իր
երկնակամարին վրայ: Այսպիսի ժողովուրդ մը բնա-
կած կ'երեւէր մահաւանդ Կասպից ծովուն կողմերը
Եփրատի եւ Տիգրիսի բլրակայրը, որ, ըստ յարա-
տեւ աւանդութեան, երկրաւոր Դրախտին տղան, եւ
մարդկութեան որրանն է:

Այս ծանոթութիւնները գաղթականներու հետ փոխադրուելու են այլուր եւ անցեր են Նիւուէի եւ Բաքիւնի անտղաբաշխներուն, ապա Մարաց, Պարսից, Եգիպտացոց եւ վերջապէս Յունաց որ զանոնք անցի փոխանցեր են...

S. P. WOOD

Տնօրէն Գուրծի դիտարանին

ԳԱԹՈՒԽՈՒՄ ՄԷԶԶԵՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ (*)

Ռուհին վար օլաուդընը, սաճի իսուկինի, ճիսմեն ճարգը պուլունսդրեք թասեղ իքմի օլաուդընդսան, շիմի օնըն ռուհանիլիլինի թասեղ իքմե գալմե սր, էանի ռուհ պեւերին ճիսմեղ վար օլապիլմեսենի վե ֆեսիկնէ խասս օլան էճալը ճիսմէ սարը ինթիյան իքմե ֆսիզիկն օէ ինրա իսեպիլի օլաուդընը իսպաթ իքմե լազըմ սր:

1. ԻճԵՆԻՅԻՆ ԻԵՒԵԼԻ ՔԱՆՐԱՐԱՍԱՐ ԿԻՎԻ,
պԻՐ ՄԵՎՃՈՒՏՐՆ ՍՈՒ ԹԱՎԻՐԱՅԻՆԱ, ՕՆՈՒՆ
ԷՖԿԱՐԵՐԱ ԿԻՒՔԻՍՐԱՆԱՊԵՐՆ ԿԵՐ ՔԵՍ ՎԵՐ-

(*) St. = Pp. 133, 42 81.

լիր: Պիր մեվնուսըն ասարը օնըն քապիա-
բըլլա միքեմասիպ սիր, պիր էսէր, քենսինե
վիւնուս վերէն սեպեպին Ֆեվգինե պիր
քապիաբը, պիր մանրիքի հայիզ օլամագ.
հէր ասըն ալիմէրի տէ, իլմի տէ, մանթը-
գը տա պունըն պէօլէ օլտուղընը գապու-
վէ իգըար իթմիշ տիրէր: Պինաէն ալէյհ,
պիր մէվնուտ, մատտէտէն միւսթագիլլ օ-
լան բուհանի էսէրէր հուսուլա կէթիրէպի-
լիրսէ, տէմէք տիր քի քէնտի տէ բուհանի
տիր վէ մատտէտէն միւսթագիլլ տիր:

2, Իշթէ պիզիմ բուհըմըզ ասար ու է-
ֆալը բուհանիէյէ վիւնուտ վէրմէքտէ տիր.
գուվէյի միւտրիքէմիզ հագիգաք, հիւսն,
խայր ու վազիքե կիպի կէօրիւլէմէզ, ճիւմ-
սիզ, էպէտի շէյէրի թանըր, հալպուքի
ճիւմ, մատտէ օրայա եթիշէմէզ, պունը
եաքամագ... Պիզ խայր ու շէրը հագգըն-
տա մուհաքէմէ իտէրիզ, աօղրուլը եանըշ-
տան ֆէրզ ու թէմիզ էյէրիզ, ազլըմըզ,
մանթըզըմըզ սայէսինտէ, մալիւմ օլան հա-
գալիգտէն զայրը մալիւմ պուլընան հագա-
յըզա իրթիգա իտէրիզ վէ միւսթէլիֆ իլիմ-
լէրին բրէնսիբլէրինի թալին էյէրիզ...
Քէաֆէյի պու ֆիլլէր հիշ պիր ուզվը
մատտինին իշթիրագը օլմագըզըն հասը
օլուրլար շիւնքի հէքսի տէ զայրը մատտի
շէյէր տիրէր: Շու հալտէ պունլար ճէվէրի
բուհանին էսէրի օլմագ կէրէք տիրէր: Իշ-
թէ պու սուրէթլէ, իտրաքըմըզն էֆալ ու
ասարը, ճանըմըզն պիր բուհ օլտուղընը
թատիգ ու իսպաթ իտէր, եօգսա էսէր,
քէնտինի թէվլիտ իտէն սէպէպին մա ֆէվ-
գինտէ գալաճագ, ֆիլլ, ծնը հասը իտէնին
թապիաթ ու մանիէթինէ մուվաֆըզ վէ օ-
նուլլա միւթէնասիպ օլմայաճագտը:

Իրասէթիմիզ տալի, հաստէլէրին եթի-
շէմէտիյի, հաստէ իշթիհալարընըն էլտէ ի-
տէմէյէճէյի շէյէրէ աթըլըր: Իրատէթիմիզ
հիհայիքսիզ էյիլիյի, մանկվի էյիլիյի, Ֆագի-
լիքի, ինքիզամա քեքեքե, նամուսա, իլմի
թէշնէ տիր: Հաթթա պազը տէֆա պու նի-
մէթլէրի, սէրվէթինի, հայաթընը գուրպան
իտէր. հալպու քի էյէր քէնտինի պիր գուվ-
վէյի մատտիյէ օլմուշ օլսայտը, ծնըն պիւ-

թիւն բաղպէթի պու մատտիաթա միւնհա-
սըր գալաճագտը: Շու հալտէ մէվատտը
մատտիյէտէն թէճէրրիւտ իտէպիլէն, ծնարը
իսթիսֆաֆ էյլէյէն, պիլ աքս, նիյէմի բու-
հանիէնին հուպուլլա շէյտա օլան իրատէ-
թիմիզ, պիր ճիւմին մալիք օլամատըզը պիր
մէլէքէյի բուհանիյէ տիր:

Ինսանըն իրասէթի քենսի էֆալընա քեա-
միլէն սահիպ սիր, իսթէմէք եաթսու իսթէ-
մէմէյէ մուսթար տըր, պու իուսուսը քէն-
տինի թանին իտէր, իրասէթ սեպէս սիր:

Վիճտանըմ պանա, թէնիմին զէվզ ու
մահըզըյէթ աբատըզը վալըթ, ծնա գարըն
կէլէպիր օլտուղըմը թատիգ իտէր: Գարըմ
աճ օլտուղընտա, ծնա եթէմէք վէրմէմէյէ գա-
տիր իմ. հաթթա, հաստէլէրինին հիւս իթ-
տիլի աղըր ու էլէմէ բաղմէն պէն ճիւմիմէ
էզա վէ ճէզա վէրէպիլիլլ վէ ծնը մահըու-
միյէթլէրէ թապի թութապիլիլլ: Պինաէն
ալէյհ տէմէք օլույօր քի, ազլըմըզ, իրատէ-
թիմիզ քէնտիլէրէ մախսուս էֆալա, ճիւմ-
տէն միւսթագիլլ պուլընան էֆալա մալիք
տիր, ճանըմըզ աստէ վէ բուհանի տիր, եօգ-
սա սէվգի թապիլիմիզէ գարըն, իրատէթի
ճիւզըյէմիզին հիւքմընիւ իճրա իթմէք գա-
պիլ օլամայաճագտը:

Էօլէ իսէ ճանըմըզ բուհանի տիր:

— Մաքիթիալիսքիք վէ քօզիքիլիսքիք
ճանըն բուհանիլիլլինի ինքեար վէ մատտէ ի-
լէ, ալըլամագ սուրէթտէ մատտէյէ մէր-
պութ օլան գուվվէթլէրտէն տիշարը հիշ պիր
շէյ օլմատըզընը իտտաա իտէրէր: Պունլա-
րըն սիսթէմինէ մաքիթիալիլլ թապիր օ-
լունըր: Պու թալիմաթ պիւսպիլթիւն ապէս
օլտուլը կիպի, ազլը սէլիմէ, վիճտանա վէ
մէզհէպ գատար տա ճիւտի ֆէլսէֆէյէ մու-
խալիֆ տիր:

Ֆիլհագիգատա, էյէր մատտէտէն պաշգա
հիշ պիր շէյ եօգ իսէ, տէմէք տիր քի ա-
թըզ նէ զէքէա, նէ հիւրրիյէթ, նէ գանուլը
ատապ ու ալիլէագ վէ նէ Սլահ վար սըր:
Խոսան էն սէֆլլ էն պօզուզ սէվգի թապիլ-
լէրի արգասընտան կիտէպիլիլլ. ճէմիյէթի
պէշէրիյէ էսապը սարսըլըր, վէ արթըզ ծն-
տան սօնրա էն գուվվէթլի օլսունը գանու-
նընտան մատա գանուլ տա գալմագ:

(Մապաթ վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵՆ ԱՇԽԱՐՀ. — Ս. Քաճա-
նայապետը ունկնդրութեան ընդունեցաւ Հռոմի ժո-
ղովրդապետները և քարոզիչները և խրատեց զա-
նոնք հոգեւոյ փրկութեան գործին համար անձնա-
նուիրաբար աշխատելու: Ն. Արքեպիսկոպոսն Կլէ-
մէմ. Փոմփիլի փոխանորդ կարգինալը:

•. Ն. Արքեպիսկոպոսն ներկայ գտնուեցաւ առա-
քելական պալատին մէջ արուած առաջին Քարոզին:
Քարոզիչն էր Հ. Լուգա պատուաւոր վեդարաւորաց
կարգէն:

•. Ս. Ռենէ Պաղէն՝ Արքեպիսկոպոսն Քաճա-
նայապետէն էր իր վերջին բանաստեղծութիւնը, զոր ար-
տասանեց Ֆրանսական Սկիսիմային առջեւ՝ առա-
քինութեան միջանակներուն մասին: Վսեմ. Մէրի Տէլ
Վալ կարգինալը այս առթիւ նամակ մը ուղղեց,
ուր Ն. Արքեպիսկոպոսն ըսարձն հաճութիւնը յայտնելէ
յետոյ կ'աւելցնէ. Դուք անգամ մը եւս ցոյց տուիք որ
կրօնական ռոյն կասեցնուցէ հաւատքեանց եւ
աւուսեայք ամենեւեւ եռանդուն եւ ամենեւեւ փափուկ
զգացմանց հետ: Անգամ մը եւս հասաք այդ մեծահոր-
շակ ընկերութեան նպատակին, որ է ժամանակին լե-
զուն օժեշտ ամենաքաւրճ հարստութեամբ:

•. Վասիկանի մօտ՝ Ռուսիոյ լիազօր պաշտօն-
եան, ի պատիւ Ս. Հօր Պետական Քարաւար Վսեմ.
Մէրի Տէլ Վալ կարգինալին դեսպանական ճաշկե-
րոյթ մը տուաւ:

•. Փետր. 28ին Փարիզի մէջ յատկապէս հրա-
ւիրուած բազմաթիւ երեւելի կաթողիկէներ, զնդա-
պետ Քէլէրի նախագահութեամբ ժողով գումարեցին
կաթողիկէ միութիւն տնտեսով ընկերութիւն մը կազ-
մելու նպատակով: Երկու երկար նիստեր տեղի ու-
նեցան Նախագահ Ս. Քէլէր վսեմ ճարտարօրէնութե-
ամբ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն ու-
րոնցմէ շատերը հեռու տեղերէ եկած էին, և պոր-
պեց այն սկզբունքը որու վրայ պիտի հիմնուի կաթո-
ղիկէ միութիւնը, այս սկզբունքն է միութիւն ամ-
բող կաթողիկէներու, կրօնական գետնի վրայ, իրենց
իրաւունքները և ազատութիւնները հրապարակաւ
և քաղաքականօրէն պաշտպանելու համար, եպիսկոպոս-
ներու հետ համաձայնութեամբ, բայց առանց զանոնք
պատասխանատուութեան ենթարկելու: Այս միութեան
նախաձեռնարկները չեն հակառակիր երբեք արդէն գո-
յութիւն ունեցող կաթողիկէ կուսակցութիւններուն,
ընկերութիւններուն, ակումբներուն: Միութեան նը-
պատակն է կաթողիկէից ամբողջ ուժերը համախմբել
և կեդրոնացնել կրօնական գետնի վրայ, առանց կա-
խում ունենալու ու եւ կուսակցութեանէ: Այսօրինակ
ընդհանուր միութիւններ ունին արդէն Անգղիացի,
Գերմանացի, Աւստրիացի, Պելճիգացի, Հոլանտացի և
իտալացի կաթողիկէները: Իսկ Ֆրանսացի կաթողի-
կէները ցարդ այլ եւ այլ առանձին խումբերու բաժ-

նուած մնալով, զուրկ մնացեր են հանրային հոգեւո-
կազմակերպութենէ մը:

Ս. Քէլէրի աջակիցը Ս. Պէլլէմէյը իմաստաւոր
տեղեկագրով մը աւելի ևս բացատրեց այս միութե-
ան հոգեւորականութիւնը:

«Մենք չենք, ըսաւ, չենք ուզեր և չենք կրնար
ըլլալ պետական վարչութեան հետամուտ քաղաքա-
կան կուսակցութիւն մը:

«Մենք չենք նաեւ կուսակցութիւններու դաշ-
նակցութիւն մը:

«Մենք կազմել կ'ուզենք մի միայն մեծ ընկերու-
թիւն մը՝ կաթողիկէ բաղադրութեամբ (որոնք կրնան նաեւ
և շատ ազատօրէն՝ պատկանել զուտ քաղաքական զպ-
նազան կուսակցութիւններու) և կ'առաջարկենք մի-
ջամուռ ըլլալ, հաւաքարար եւ կարգապահօրէն, քո-
ղաքական և ազգային պայքարին, որոնք նշաւակ ենք:

«Մեր հաւատացեալի հոգեւորականութիւնը պաշտպա-
նելու համար միտքերնիս դրած ենք: առնաբար գոր-
ծի ձեռնարկել, Ֆրանսական քաղաքացիի առանձնա-
շնորհութիւններով, ամբողջ հանրային ազատութիւն-
ներով:»

Այս երկու բանաստեղծներ արժանացան ժողովա-
կաններուն ջերմ ծափահարութեանց:

Ժողովը լուրջ խորհրդակցութեան մը վերջը նա-
խաձեռնութեան Յանձնախումբ մը անուանեց և
քուէարկեց հետեւեալ բանաձեւը.

«Ֆրանսայի այլեւայլ կողմերէն եկած եւ փա-
րիզի մէջ փետր. 28ին գումարուած կաթողիկէները,
զնդապետ Քէլէրի խօսքերը եւ Ս. Պէլլէմէյը ըն-
թեքցած յայտարարութիւնը լսելէ յետոյ կը հա-
մարին»

«Թէ Ֆրանսական ընկերութիւնը Աստուծոյ նը-
կատմամբ պարտքեր ունի, զորոնք չի կրնար ու-
րանալ առանց նորոգելու ամենաճարն խռովու-
թիւնը:

«Թէ մեր ազգային շահերուն առաջինն է
Ֆրանսայի մէջ կաթողիկէ Եկեղեցւոյ ազատութիւնը,
քանի որ այս Եկեղեցին միայն կրնայ այն տեղ
պահպանել կրօնական կեանքը եւ երկրին բարոյա-
կան ուժերը:

«Թէ հանդէպ քաղաքականութեան, որ այնքան
ծանրապէս հարուածեց այս ազատութիւնը եւ դեռ
աւելի ծանրապէս կը սպառնայ անոր, կաթողիկէ-
ներու առաջին պարտքն է միանալ, լայն պաշտ-
պանելու համար:

«Թէ այսպիսի միութիւն մը պէտք է որ քա-
ղաքական կուսակցութիւններէ դուրս եւ վեր ըլ-
լայ, չուզելով կուլ տալ կամ խափանել եւ ոչ մին
անոնց կազմակերպութիւններէն:

«Թէ այսպիսի միութիւն մը կազմուելու է Ե-
կեղեցւոյ վարդապետութեան հաւատարիմ կաթո-
ղիկէներէ, որոնք պիտի գործեն իրենց քաղաքա-
կան իրաւանց լիութեամբ, իրենք իրենց պատաս-

խանատուութեան տակ, հետեւաբար առանց վտանգել կարենալու եկեղեցական նուիրապետութիւնը: Ժողովը կ'որոշէ հետեւաբար.

«Թէ ի դէպ է, այժմէն իսկ, կազմել Յանձնախումբ մը, որուն պաշտօնն ըլլայ բազմացնել Ֆրանսայի մէջ, այս նպատակաւ ֆրանսացիները համախըմբելու ձեռնհաս կազմակերպութիւններ.

«Թէ փափաքելի է որ անոնց գործունէութիւնը երեւան գայ, որչափ որ կարելի է, առաջիկայ ընտրական պայքարին մէջ, ամէն տեղ կաթողիկէից պահանջները ամրապնդելու համար».

Ստացուելի Արքեպիսկոպոս Կարգինալ Քալթայէն և Պապական Արքեպիսկոպոս Կարգինալ Քորփաճաներ են:

Ներքին եւ ՄիջԱզգ.ԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Եւրոպական նախարար Ռիֆաթ պէյ առողջական վիճակին բերամբ հրաժարեցաւ և անոր յաջորդեց Ճալիտ պէյ, որուն հաւանութիւնը հեռագրով առնուելէ ետքը, անուանումը վաւերացաւ Կայս. Իրատեով: Բարիդի օսմ. դեսպանին ալ հեռագրուեցաւ որպէս զի Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնապէս ծանուցանէ Ճալիտ պէյի անուանումը:

Մովսիսի նախարար անուանուեցաւ Հանր. շինութեանց նախարար Ճէմալ փաշա, որուն յաջորդեց ծովային նախարար Մահմուտ փաշա, որոնց անուանումը վաւերացաւ Կայս. Իրատեով: Մահմուտ փաշա միեւնոյն ատեն ծերակուտական անուանուեցաւ, նաև ելմտական նախորդ նախարար Ռիֆաթ պէյ:

Յունաց Պատրիարքարանին երկու ժողովներուն որոշման համաձայն, Տ. Երմանոս Պատրիարքը երկու մետրապոլիտներու և աշխարհական երկու ժողովականներու հետ, Բ. Դուռ գնաց, ներկայացնելու թագրեր մը, որով կը բողոքէր Յոյներուն դէմ ի գործ դրուած պոլսթիկ և ընդհ. ներուժէն տակուին Յոյներուն չօգտուելուն դէմ: Եպարքոսը, կ'ըսէ Լա քիւրֆի, չընդունեց թագրերը, ըսելով որ Պատրիարքարանն իրաւունք չունի բողոքներ ներկայացնելու: Ներքին

գործոց նախարար Թալէադ պէյ ալ միեւնոյն կերպով խօսեցաւ Յունաց Ս. Պատրիարքին հետ:

Իշխան և իշխանուհի Վիտ Տուրացցո ժամանեցին: Մովսիսը հաւաքուած ժողովի գետն ստուար բազմութիւն մը մեծ խանդավառութեամբ ողջունեց զանոնք: Անգլ. ու Ֆրանս. և Իտալական մարտնչաւոր կ'ուղեկցէին: Իտալական թշրգանքները, որ այդ առթիւ նախապէս ցամաք հանուած էին, ողջունեցին: Ալպանիոյ վեհապետն ու վեհապետուհին որ ցամաք ելան. առաջնորդութեամբ առժամակալ կառավարութեան ներկայացուցիչներուն որ շոգենու գացած էին բարի գալուստ մաղթելու:

Տուրացցոյէն կը հեռագրեն թէ Թիւրքիան փաշա ընդունել է ալպանական դահլիճը կազմելու առաջարկը: Էստա փաշա բանակին քննիչ պետի կարգուի:

Գերման թերթերը տեղեկութիւններ հրատարակեցին գերման սահմանադրութիւն վրայ Ռուսիոյ պատրաստութեանց մասին: Ռուսիոյ ելմտական նախարարը հերքեց այդ լուրերը:

Բարիդի թերթերը կ'ըսեն թէ Հիւսիսային Անատոլիոյ մէջ Ֆրանսացիներու շինելիք երկաթուղիներն հետեւեալ երեք կէտերէն պիտի միանան գերման երկաթուղիներուն. — Ա. Պոլսէն 60 քիլոմետր դէպի արեւելք, Բ. Սեբաստիոյ մէջ և Գ. Տաւրոսի հիւսիսային կողմը: Խարքերդ ու Արզնի: Ֆրանսացիներուն շինելիք մեծ գիծերն են Սամսուն—Սեբաստիա—Խարքերդ և Արզնի: Ասոնք Սեբաստիայէն ու Արզնիէն պիտի միանան Պաշտատի գիծին:

Ահարկու թաթառ մը իջաւ Մ. Նահանգաց բովանդակ արեւելեան եղբրքին վրայ ժամական 446 քիլմ. արագութեամբ և սոսկալի փնտներ առաջ բերաւ: Նիւ Էսքրի մէջ առեւտուրը դադրած է և հալորդակցութիւններն ընդհատուած են: Մարդկային բազմութիւն զոհեր կան: Մինչև հիմա 40 մեռեալներ գտնուեցան: Մովսի վրայ ալ կատաղի փոթորիկ մը տիրած ըլլալով, վեց նաւեր կորան: Անհաշուելի քնաս կայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	161
Ճրակադէմ	164
Տեառն Կոմիտասայ Բանանային պատմութիւն	166
Ս. Հաղորդութեան վարդապետութիւնը	168
Եօթնեակ Բրիտանի	170
Անպակաս սուրբ	171
Դիսական	172
Գաթոյի Մեղհեայի էսալար	173
Տեղեկագրական	175

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐԵՆ-ԽՄԱՆԴՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Կ. Արձագանգ Շաքարաբերքի, Բերա, Պայրամ փողոց քիւ ծ, Կ. Պոլս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թոգրիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսասահ-
ման տար. Յր. 10. վեցամս. 5 .— Վճարմունք կանխիկ են .

ՀԱՍՑԷ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5 . Պայրամ փողոց 5, 4 .

Պոյն:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Զեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգ Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ՝ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, բարդեր, քարդ-տարեանք.
մահազդներ, եւն. եւն. Գրիները անմեղելի կերպով աժառն են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
ընան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau:

SUCCURSALES EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets de commerce.

Emission de chèques, et de lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accreditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse.

Garde de valeurs publiques etc. etc.

Caisse d'Epargne.

Locations de coffre-fort.